



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԱՐՏ. ՊԵՏՐՈՅԱՆ



== ԻՆՉՊԵՍ ==

ՅԵՎ.

ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

== ԳԻՆԷԼ ==

ԳՅՈՒՂԹՂԹԱԿՅԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

„ՄԱՃԿԱԼ“-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1980 — ՅԵՐԵՎԱՆ — 1980


07.02

# ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ԳՐԵԼ

1754

A 4241

ԳՅՈՒՂԹՂԹԱԿՅԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ




ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՄԱՃԿԱԼ»-Ի

1930 թ.

ՅԵՐԵՎԱՆ

1980 թ.





07.02

# ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ԳՐԵԼ

A  $\frac{I}{4241}$

ԳՅՈՒՂԹՂԹԱԿՑԻ

ՈՒՂԵՑՈՒՅՑ




ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՄԱՃԿԱԼ»-Ի

1930 թ.

ՅԵՐԵՎԱՆ

1930 թ.



ՀԱՅԳՈՒԳՐԱՆԻ ՏԳՆՐԱՆ

Գրառեպոզիտ 3069 ք.

Պատմ. № 1288

Տիրաժ 1500

## ԱՌԱՋԱԲԱՆ

Գյուղթղթակիցների շարժումը մեզանում գնալով ծավալվում է: Միայն «Մանկալ» թերթի շուրջը ներկայումս համախմբված են մոտ 2500 գյուղթղթակիցներ, իսկ յեթե հաշվելու լինենք նաև մյուս տպագիր թերթերի, ինչպես նաև գյուղական պատի թերթերի շուրջը համախմբված թղթակիցներին, այդ դեպքում նրանց թիվը 5-ից 6 հազարի կհասնի:

Մեր թղթակիցների խոշոր մասը կիսագրագետ բարակ ու չքավոր գյուղացիներ են, վորոնք չգիտեն թղթակցություն գրելու անվերը:

Մինչև հիմա մենք չունենք հայերեն լեզվով մի գրքույկ, վորն ոգներ և տոն, ուղղություն տալ թղթակիցների աշխատանքներին, և սեա այդ բացը վորոշ չափով վերացնելու համար խմբագրությունս երատարակում է ընկեր Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ այս փոքրիկ գրքույկը:

Հրատարակելով և թղթակիցների մեջ տարածելով այս փոքրիկ գրքույկը՝ խմբագրությունս նպատակ է դնում, մի կողմից բարձրացնել թղթակիցների վորակը, առաջ քաշել մեր թերթերի շուրջը թղթակիցների նորանոր

կադրեր և մյուս կողմից ոգնել քղթակցին  
գյուղի սոցիալիստական վերակառուցման աս-  
պարիզում իր աշխատանքներն ավելի հաջող  
կազմակերպելու համար:

Յուրաքանչյուր գյուղքղթակից պետք է  
աշխատի իր ձեռքի տակ ունենալ այս գրք-  
նույկը:

**«ՄԱՃԿԱԼ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

---

# ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ԳՐԵԼ

ԳՐԵԼ ԿԱՐՈՂ Ե ԱՄԵՆ ՄԵԿԸ

Շատերը կարծում են, վոր թերթում գրելու համար պետք է լինել թերթի աշխատակից կամ պետք է ունենալ ինչ վոր առանձին ընդունակություն, ժուրնալիստական ձիրք: Այս տեսակետը ճիշտ չէ: Մեր մամուլը պրոլետարական է և նրան կարող են մասնակցել նույնիսկ կիսագրագետ աշխատավորները: Թղթակցությունը թեկուզ գրած լինի մի քիչ ել մտտ ձևադրով և սխալներով, բայց յեթե նա մեզ ձեռնտու վորևե նպատակ է հետապնդում, յեթե նա թեկուզ փոքր չափով ոգնում է մեր այս կամ այն որդանին, աշխատանքի այս կամ այն ասպարեզին, ապա այդսիսի թղթակցությունը թերթի խմբագրությունները կուղղեն, կշտկեն, կտպագրեն թերթում կամ կաշխատեն դրա առթիվ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել:

Այնպես վոր դյուղացին, գեղջկուհին, բատրակ-բատրակուհին, խորհրդային ծառայողը և ամեն մի աշխատավոր կարող է և պետք է գրի մեր պատի և սպառիթ թերթերում:

Վերցնենք մեկ որինակ. Ն. Բայազեդի  
 դավ. Վ. Ղարանլուխ գյուղից թղթակից Գ.  
 Պետրոսյանը գրում է՝ «Դեկտեմբերի 30-ին  
 մեր գյուղում ունեցանք չքավորական ժողով,  
 շնորհիվ գավառապետի և շրջուսկումի քաղ-  
 տուղարի: Ժողովում լավեց գյուղխորհրդի նա-  
 խագահի գեկուցումը իր տարած աշխատանի-  
 ների մասին, աշխատանք տարվել է հաջողու-  
 թյամբ, բայց և այնպես սեկցիաները չեն աշ-  
 խատել, բացի դատական սեկցիայից, վորը  
 100 տոկոսով լավ է աշխատել: Չքավորական  
 ժողովը վորոշում հանեց, վոր յեղած թերու-  
 թյունները վերացնել և այլն»: Ինչպես տես-  
 նում ենք թղթակից Պետրոսյանի թղթակցու-  
 թյան մեջ վաչ մի փաստ չկա: Խոսում է խոր-  
 հորդի հաջողությունների և թերություննե-  
 րի մասին, սակայն մի վորևէ փաստ չի բերում  
 հաջողությունների կամ կատարված ու չկա-  
 տարված աշխատանքների մասին: Նույնիսկ  
 թղթակցության մի քանի կետերն իրար հա-  
 կասում են. սկզբից ասում է, վոր աշխատանք-  
 ները տարվել են հաջողությամբ, իսկ հետո  
 գրում է, վոր սեկցիաները թույլ են աշխատել  
 և այլն: Յեթե թղթակից Պետրոսյանը խոսում  
 է խորհրդի կատարած լավ աշխատանքների  
 մասին, ապա փաստերով պետք է գրել, թե  
 խորհուրդն ի՞նչ է արել՝ լուսավորության,  
 առողջապահության և այլ ասպարեղներում,

յեթե սեկցիաները թույլ են աշխատել, ապա վո՞ր աշխատանքը չի կատարվել կամ կիսատ է մնացել, ասենք՝ դպրոցի կառուցո՞ւմը, ցանքսերի որսկո՞ւմը, կոլտնտեսութ՞յան ոգնե՞լը, թե՞ մի ուրիշ բան: Բացի դա, ամեն մի թղթակից մի վորևե նյութի մասին գրելիս, թղթակցութ՞յան վերջում պետք է անի իր առաջարկութ՞յունները, յեղած թերութ՞յունները վերացնելու համար, հակառակ դեպքում թրղթակցութ՞յունները վոչ մի արժեք չեն ունենա:

Բերենք մի փոքրիկ որինակ ևս, թե ինչպես չպետք է գրել թղթակցութ՞յունը:

Ահա մեր դյուղթղթակիցներից մեկի նամակը. «Մեր գյուղում կոոպերատիվը լավ է աշխատում, նա չքավորներին կոոպերացման է յենթարկում, շրջանառութ՞յունը գնալով բարձրանում է, կուլտուր-կրթական աշխատանքը շատ ուժեղ է, գյուղացիութ՞յունը միանգամայն գոհ է կոոպերատիվից և այլն»:

Այդպիսի թղթակցութ՞յուն վոչ մի արժեք չունի և անպետք է: Նրա մեջ վոչ մի փաստ չկա և բոլորն էլ ընդհանուր խոսքեր են:

Ի՞նչ է նշանակում կոոպերատիվը լավ է աշխատում, չքավորներին կոոպերացման է յենթարկում և այլն: Քեզ թվում է, վոր լավ է աշխատում, իսկ մի ուրիշը ծանոթանալով կոոպերատիվի աշխատանքների հետ, կտեսնի վոր կոոպերատիվը լավ չի աշխատել, վորովհետև քո ընդհանուր խոսքերին վսչ վոք չի հավատա, դու փաստերով ապացուցիր կոոպե-

րատիվի գործունեյությունը, այդ դեպքում  
 խմբագրությունը և ընթերցողները կգնահա-  
 տեն նրա կատարած աշխատանքները: Պետք է  
 պարզ ու կոնկրետ կերպով գրել, թե ինչումն է  
 կայանում կոոպերատիվի լավ աշխատանքը,  
 յեթե չըջանառությունը բարձրանում է, ա-  
 պա ինչքան եր առաջ և ինչքանի յե հասել, յե-  
 թե չքավորներին կոոպերացման է յենթար-  
 կել, ապա դրիր, քանի հոգու, ի՞նչ միջոցնե-  
 րով և այլն: Այս բոլորը մատնանշելով քո թըղ-  
 թակցությունը շատ հետաքրքիր ու ոգտավետ  
 կլինի, դրանից շատերը կարող են ոգտվել և  
 սովորել, թե ինչպես կառուցել կոոպերատիվի  
 աշխատանքները: Առհասարակ ամեն մի թըղ-  
 թակցություն թերթում տպվելիս, պետք է  
 սովորեցնի մեզ, թե ինչպես պետք է աշխատել  
 կամ ինչպես չպետք է աշխատել:

Ուրեմն ամեն մի թղթակից գրելիս պետք  
 է հիշի հետևյալը՝

1. Առաջին հերթին հանդես բերել յեղած  
 փաստերը, նվաճումները, թերությունները և  
 այլն:

2. Յե՞րբ և ինչպիսի՞ միջոցներ են ձեռք  
 առնված տեղում այդ թերությունները վե-  
 րացնելու:

3. Ինչի՞ց առաջացան այդ բացերը:

4. Ինչպես վերացնել ցույց տված բացե-  
 րը (թղթակցի կարծիքը):

Յեթե թղթակից Պետրոսյանն այս բոլորը

ցույց տար, նրա թղթակցութիւնն որինակելի  
և արժեքավոր կլիներ:

Բացի այդ պետք է ստուգել հետո գրել.  
ուրիշների լսածի վրա չպետք է հիմնվել, վո-  
րովհետև դրանք կարող են ճիշտ չլինել: Որի-  
նակ՝ Եղմիածնի դավառի Բյուրական գյուղից  
թղթակից Ա. Մնացականյանը չստուգված  
փաստերի հիման վրա, կամ ավելի շուտ սրա  
նրա բերանից լսելով, գրում է, վոր կոտպերա-  
տիվի գործակատարը խնամիրութիւնն է անում  
և այլն: Այս գործը, յերբ քննվում է՝ պարզ-  
վում է, վոր թղթակից Արամայիսի թղթակ-  
ցութիւնն իրականութեանը չի համապատաս-  
խանում: Հենց ինքն Արամայիս Մնացա-  
կանյանը հերքում է տալիս խմբագրութեանն  
իր թղթակցութեան ստիճիվ, հայտնելով վոր  
ինքը ստուգված փաստերի հիման վրա չի գը-  
րել, վոր իր գրածը սխալ է և այլն:

Այդպիսի որինակներ շատ կան: Թղթակի-  
ցին անճիշտ բաներ գրելով դցում է թե մա-  
մուլի և թե իրեն հեղինակութիւնը աշխա-  
տավոր մասնայի առաջ:

Գրելուց միշտ պետք է հիշել, վոր խմբա-  
գրութիւնը և ընթերցողը չի կարող իմանալ  
այն բոլորի մասին, ինչ վոր ձեզ մոտ կատար-  
վում է, դրա համար ել մի վորևէ բանի մասին  
գրելիս պետք է աշխատել անաչառ և խնդիրը  
լրիվ չափով սլարգարանել:

Թղթակցութիւններ գրելիս շատ ավելորդ  
խոսքեր ու բառեր չպետք է գործածել: Որի-

նակ՝ մեր թղթակիցներից շատերը գրում են  
ուզմականացման աշխատանքների մասին,  
սակայն ամբողջ թղթակցութունը ծանրա-  
բեռնում են պատերազմի վտանգով և Ձեմբեր-  
լենին հակահարված տալով: Ավելորդ ճառեր  
պետք չեն, պետք է ուղղակի սկսել այն բա-  
նից, ինչի մասին գրում ես:

Գյուղթղթակիցը պետք է գրի վոչ միայն  
այս կամ այն հիմնարկության և կազմակեր-  
պության աշխատանքների թերությունների  
մասին, այլև նվաճումների մասին, վորովհե-  
տեմ սովորել կարելի յե նաև լավ որինակնե-  
րից ու փորձերից: Յեթե ձեր գյուղում ՓՍԿ-ը  
գյուղի շինարարության, լուսավորության  
կամ այլ ասպարեզներում մի վորևե որինակե-  
լի աշխատանք է կատարել, ապա գյուղթղթա-  
կիցը թերթի միջոցով աշխատանքների այդ  
լավ փորձը պետք է տա նաև իր հարևան գյու-  
ղերի փոկերին, վորպեսզի նրանք ոգտվեն դը-  
րանից:

Նախքան գրելը, լավ պետք է մտածել, թե  
ինչի մասին ես ուզում գրել և յերբ քեզ պարզ  
կլինի թե ի՞նչ ես ուզում ասել, այդ դեպքում  
քեզ հեշտ կլինի քո մտքերը գրի առնել:

Շատ գյուղթղթակիցներ, մանավանդ նոր  
սկսողները, թղթակցություն գրելիս շատ չար-  
չարվում ու մտածում են, թե ինչ գը-  
նել թղթակցության վերնագիրը: Իրա  
համար շատ չպետք է մտածել, վո-  
րովհետև գլխավորը վերնագիրը չէ,

այլ թղթակցութեան բովանդակութիւնը :  
հարկավոր և սկզբից գրել թղթակցութիւնը և  
հետո սալ նրա վերնագիրը, իսկ յետեւ այդ  
այնքան եւ հարմար չի լինի թղթակցութեանը,  
գարձյալ վոչինչ, վորովհետև խմբագրու-  
թիւնը դա կուղղի :

Թղթակցութիւններ գրելիս միշտ պետք է  
հիշել, վոր այն բոլոր հարցերը, վորոնք տե-  
ղական բնույթ են կրում, մանր հարցեր են,  
տեղում կարող են լուծվել, արժեք չեն ունենա-  
լիս տպագիր թերթերում տպվեն, այդ հար-  
ցերի մասին չպետք է գրել տպագիր թերթե-  
րին, այդպիսի հարցերի մասին պետք է գրել  
գյուղի ստաի թերթում : Տպագիր թերթերում  
պետք է գրել մի քիչ ավելի մեծ նշանակու-  
թիւն ունեցող հարցերի մասին, վորոնք կա-  
րելի են վոչ միայն ձեր գյուղի, այլև հարե-  
վան գյուղերի և շրջանների համար :

Ամեն մի թղթակցութեան մեջ ավելի լայն  
է գրել միայն մի խնդրի մասին : Հաճախ գրում  
են գյուղխորհրդի, փոկի և կոոպերատիւի  
մասին մի թղթակցութեան մեջ. ավելի լայն է  
գրել յերեք առանձին թղթակցութիւններ գը-  
րանց աշխատանքների մասին, դա շատ նպա-  
տակահարմար է և հնարավորութիւն կտա ավելի  
լայն խորանալ այդ յերեք կազմակերպու-  
թիւնների աշխատանքների մեջ, հանդես բե-  
րել նրանց նվաճումները, թերութիւնները և  
այլն :

Գյուղթղթակիցը պետք է իմանա, վոր  
խմբագրությունը տալագիր թերթերի, թղթակ-  
դի իսկական անուն-ազգանունը միշտ դադա-  
նի յե պահում: Թղթակցի իսկական անուն-ազ-  
գանունը խմբագրությունը հայտնում է միայն  
դատական որդաններին, այն ել այնպիսի դեպ-  
քում, յերբ կարիք է գդացվում թղթակցու-  
թյունների առթիվ քննություններ կատա-  
րել:

Յեթե քեզ հալածեն քո թղթակցություն-  
ների առթիվ, ապա դրանից չպետք է վախենալ  
և հուսահատվել, վորովհետև գյուղթղթակցի  
պաշտպանությունն ապահովված է կուսակցա-  
կան և խորհրդային մարմինների կողմից: Սոր-  
հրդային որդանները խիստ պատժում են այն  
մարդկանց, վորոնք հալածում են թղթակից-  
ներին:

Թղթակցությունների տակ թղթակիցը կա-  
րող է գրել իր կեղծ անունը, որինակ՝ «Ման-  
դադ», «Իսառոդ», «Տեանոդ» և այլն, բայց  
յուրաքանչյուր թղթակցության տակ պետք է  
գրել նաև իր ճիշտ անուն-ազգանունը և հաս-  
ցեն, վորպեսզի խմբագրությունն իմանա թե  
ո՞վ է գրողը, կամ իրենց թղթակիցը վորտեղ  
է աշխատում և այլն:

Պետք է աշխատել թղթակցությունները  
գրել կարճ, հնարավորության դեպքում թա-  
նաքով և թղթի մի յերեսի վրա:

Յորհրդային Միութեան մեջ, մոտ կես միլիոն բանվորներ և գյուղացիներ մասնակցում են մեր քանվորական և գյուղացիական մամուլին: Բուրժուական աշխարհում մենք չենք տեսել և յերբեք ել չենք տեսնի, վոր բանվորա-գյուղացիական այդպիսի լայն մասսա մասնակցի մամուլին: Այդ բացատրվում է նրանով, վոր բացի Յորհրդային Միութեանից, բոլոր յերկրներում մամուլը ծառայում է կապիտալիստների շահերին, մամուլի միջոցով նրանք խաբում, ճշում ու շահագործում են բանվորներին և գյուղացիներին: Իհարկե, այդպիսի մամուլը աշխատավորութեանը վնասից բացի, վոչ մի ոգուտ չի տալիս և չի ել կարող տալ. ել ինչի՞ մասին կարող են գրել գյուղացիները. յեթե գրեն իրենց շահագործման կամ կապիտալիստների կողմից յեղած ճշումների մասին, այդ գեպքում ել նրանց թղթակցութեանները չեն տպադրվի: Մեզ մոտ բոլորովին ուրիշ բան է, մեր մամուլը ծառայում է միլիոնավոր բանվորների և աշխատավոր գյուղացիներին շահերին:

Մեր մամուլում ամեն մի աշխատավոր գյուղացի մասնակցութեամբ պետք է ունենա, վորովհետև մեզում աշխատավորն ինքը հանդիսանում է յերկրի տերն ու կառուցողը, աշ-

խատաճար գյուղացիէ, բանվոր դասակարգի  
հետ միտսին և նրա ղեկավարութեամբ, տա-  
նուս Ե մեր սոցիալիստական շինարարութեան  
պատասխանատւութեամբ և բոլոր դժվարու-  
թեանները:

Յեթե առաջներում մի գյուղացի մտներ  
մի վորէն հիմնարկութեան և սեաներ, վոր  
այնտեղ ընկած մեքենաները, գործիքները կամ  
այլ իրերը փչանում են, նրան այդ բոլորովին  
չեք անհանգստացնում, վորովհետև այդ ի-  
րերը մասնավոր մարդկանց կամ ցարական կա-  
ռավարութեանն էլին պատկանում, իսկ այժմ  
դրանք պատկանում են բանվորներին և գյու-  
ղացիներին. բանվորներն ու գյուղացիներն ի-  
րենք են կառուցում յերկրի անտեսութեանը և  
յեթե գյուղացին այսօր մի վորէն հիմնար-  
կում նկատում է, վոր մեքենաները, գործիք-  
ները կամ զանազան այլ իրերը փչանում են,  
սպա պետք է մտածի մի վորէն միջոցի դիմել,  
այդ իրերի գոյութեանը պաշտպանելու և թույլ  
չտալու, վոր հասարակական այդ գույքը փչա-  
նա:

Յորհրդային Միութեան մեջ շատ ճանա-  
պարհներ և միջոցներ կան, վորոնք հնարավոր-  
ութեան են տալիս բանվորներին և գյուղա-  
ցիներին՝ մասնակցելու մեր աշխատանքներին  
(խորհուրդները, կոոպերացիան և այլն), և  
այդ լավագույն ճանապարհներից և միջոցնե-  
րից մեկն էլ հանդիսանում է մեր մամուլը:

Մամուլի միջոցով գյուղացիները վառ

նակցում են մեր սոցիալիստական շինարարու-  
թյան աշխատանքներին, մամուլի միջոցով  
դյուղայինները պայքարում են մեր թշնամի-  
ների, մեր աշխատանքների թերի կողմերի,  
բյուրոկրատիզմի և նման յերևույթների դեմ  
ու այդպիսով ոգնում են մեր իշխանությանը,  
դյուղում կատարվող աշխատանքներն ավելի  
լավ հիմքերի վրա դնելու համար:

Բերենք մի քանի որինակներ.

Կոտայքի շրջանի Առինջ գյուղի թղթա-  
կիցներից մեկը գրել էր «ՄԱՃԿԱԼ»-ում, վոր  
խորհրդի նախագահը դասակարգային գիծ չի  
տանում և այլն: Այդ թղթակցության հիման  
վրա շրջագործկոմը քննություն կատարեց և  
խորհրդի նախագահին հեռացրեց իր պաշտո-  
նից: Լուսի-Փամբակի Շնող գյուղի թղթակից-  
ներից մեկը գրել էր «ՄԱՃԿԱԼ»-ին, վոր խոր-  
հրդի նախագահը բյուրոկրատ է և այլն: Դա-  
տախուսությունն այդ թղթակցությունը քն-  
նության տուավ և գյուղխորհրդի նախագահին  
դատի ամեց իբրև բյուրոկրատի և իշխանու-  
թյունն ի չարը գործ դնելու համար:

Նման որինակներ շատ կարելի յե բեթել,  
թե սպառվիր և թե պատի թերթերից:

Մեկ տարվա ընթացքում միայն «ՄԱՃ-  
ԿԱԼ» թերթում սպառված և մոտ յերկու հա-  
զար թղթակցություն, մի եզքան ել ուղարկ-  
ված և յեղել կուսակցական, խորհրդային ու  
դատական օրգաններին քննություններ կատա-  
րելու և ընթացք տալու համար: Այդ չորս հա-

զար թղթակցություններից մոտ 3500-ը վերաբերվել են գյուղում կատարվող աշխատանքների թերություններին, թղթակիցներն այդ հարցերն արժարժեղով մամուլում, կարողացել են դրանց համապատասխան լուծում տալ:

Այդ փաստերը ցույց են տալիս, վոր մեր յերկրում բանվորներն ու գյուղացիները պատի և տպագիր թերթերի միջոցով, ակտիվ կերպով մասնակցում են մեր սոցիալիստական շինարարության բոլոր ասպարեզներում կատարվող աշխատանքներին:

Կոմունիստական կուսակցությունը և Սորհրդային իշխանությունը շափաղանց մեծ կարեվորություն են տալիս մասսաներին մամուլի հետ կապելու գործին, մամուլի միջոցով հասարակական վերահսկողություն ստեղծելու պետական շինարարության և առհասարակ մեր բոլոր աշխատանքների մեջ:

Ընկ. Լենինը սովորեցրել է մեզ, վոր ավելի շատ բանվորների և գյուղացիների պետք է մասնակից անել մեր մամուլին, նա պահանջում է, վոր բոլոր հիմնարկությունները և կազմակերպությունները լսեն և կատարեն մամուլի ցուցմունքները:

Սորհրդային իշխանության շատ որենքներն անգամ ուղղվել կամ փոփոխության են յենթարկվել հենց թերթերում տպագրված թղթակցությունների հիման վրա, իշխանությունն այդ թղթակցությունների հիման վրա

կարողացել և հետևել, վոր խորհրդային ստորին ապարատներում մեր որենքները չխեղաթյուրվեն և ճիշտ կերպով կյանքի մեջ կիրառվեն: Մեր իշխանությունը կարողացել և հարյուր հազարավոր ուրբիներ անտեսել, շնորհիվ այդ թղթակցություններն: Բանվորները և գյուղացիները մամուլի միջոցով մեծ ոգնություն են ցույց տվել մեր իշխանությունն ամրացնելու և մեր կյանքը լավացնելու գործին:

Մեր իշխանությանն ոգնում են և յեղած բացերը վերացնում են վոչ միայն թերթում տպագրված թղթակցությունները, այլ և այն բոլորը, վորոնք ուղարկվում են խմբագրության: Չտպագրված թղթակցությունները խմբագրությունն ուղարկում և համապատասխան մարմիններին և կազմակերպություններին, հետաքննություններ կատարելու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու: Թղթակցությունները հիմնարկություններին և կազմակերպություններին ուղարկվում են առանց թղթակցի կամ հեղինակի անուն-ազգանունի, վորպեսպի նրանք չիմանան թե ով և գրողը և հալածանքներ առաջ չգան, և բացի այդ, ուղարկվում և վոչ թե խկական թրղթակցությունը, այլ նրա պատճեն:

Մեր իշխանությունը հատուկ որենք ունի նաև այն մասին, վոր յեթե թղթակցությունն ուղարկվում և այս կամ այն հիմնարկությանը հետաքննություն կատարելու և յեթե նը-

բանք տարածում են թղթակցի անունը, այդպիսի մարդիկ յենթարկվում են պատասխանատվության իբրև քրեական հանցավոր: Չըտույազրված թղթակցությունների առթիվ մեր ունեցած նվաճումները շատ մեծ են: Այդպիսով, ամեն մի թղթակցություն, վորն ուղարկվում է խմբագրության և վորը շատ թեքիչ կարևոր հարց է շոշափում, անհետևանք չի մնում: Խմբագրությունն ուղտազործում է դրանց և համապատասխան ընթացք տալիս:

### ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ԳՐԵԼ

Այս կամ այն հարցը պարզաբանելիս, թղթակիցը պետք է կարողանա ճիշտ կերպով դրնել հարցերը, միակողմանի չլինել, չընկնել չափազանցությունների մեջ և տրամադրությունների պոչից չզնայ: Մեր թղթակիցներից մեկը գրում է, վոր դյուղացիք դժգոհ են ինքնահարկման որենքից, սակայն, յերբ ըննություն կատարվեց, պարզեց, վոր դյուղացիք դժգոհ չեն, այլ դժգոհ են մի քանի կուլակների: Ուրեմն թղթակիցը հաշվի յե առել վոչ թե դյուղացիների մեծամասնության կարծիքը և նրանց առաջարկությունները, այլ մի քանի կուլակների և դրանից յեզրակացություն է հանել, վոր դյուղացիք դժգոհ են ինքնահարկման որենքից: Սա վոչ թե միայն սխալ է, այլ և վտանգավոր. դրելիս պետք է նկատի առնել, թե դյուղացիության վո՞ր շերտի շա-

Ներքի համար ե վոր դրում ե գյուղթղթակիցը:

Ի՞նչ խոսք, վոր գրելիս պետք ե ինկատի ունենալ բանվոր դասակարգի, բարակների, չքավորների և ընդհանրապես աշխատավորության հովաքական շահերը:

Թղթակիցը կյանքից յեա չպիտի մնա, նա պետք ե իր խոսքն ասի որվա հրատապ հարցերի մասին:

Յենթադրենք այսոր գյուղում կազմակերպում ենք կոլեկտիվ անտեսություններ կամ սուաջ ենք տանում կուլտուրական արշավի աշխատանքները, գյուղթղթակիցը պետք ե կարողանա տեսնել և ուսումնասիրել այդ աշխատանքների մեջ յեղած թերությունները, յեղած խոչընդոտները և լուսաբանի մամուլում:

Անհրաժեշտ ե թերթում գրել նաև այն խնդիրների մասին, վորոնք բարձրացնում ե մեր մամուլը: Յենթադրենք մամուլն անց ե կացնում չքավորական խմբակների աշխատանքների ստուգատես, կամ թղթակիցների ուշադրությունը հրավիրում ե այդ հարցի վերա, թղթակիցը պետք ե ուսումնասիրի, ծանոթանա իրենց գյուղի չքավորական խմբակի աշխատանքների, նրա հաջողությունների և թերությունների հետ, հանդես բերի յեղած փաստերը, և արձագանքի մամուլի բարձրացրած հարցին: Յեթե մամուլը գրում ե, վոր գյուղում գյուղատնտեսական գործիքները կանոնավոր չեն ոգտադործվում, ապա գյուղ-

թղթակիցն իր ուժերը սկսեց և լարի և մանրամասն կերպով ուսումնասիրի, թե ինչպես են դրված այդ գործիքների ոգտագործման աշխատանքներն իրենց գյուղում:

Գյուղթղթակիցն իր ուժերը մորիլիզացիայի պետք է յենթարկի, մամուլին ոգնելու, վորպեսզի նա կարողանա այս կամ այն հարցն ավելի խորացրած և՛ լայն կերպով լուսարանել:

Ընկ. Լենինը գրել է, թե՛ մենք բանվորներին և գյուղացիներին խնդրում ենք գրել մեր թերթերին, վոչ միայն թերթերում այդ նամակները տեղավորելու համար, այլ և խրմբագրության հետ ընկերական ամուր կապ հաստատելու համար, վոր այդ թղթակցությունների և նամակների հիման վրա խմբագրությունը ծանոթանա վոչ միայն կատարված աշխատանքների, նրա նվաճումների ու թերությունների հետ, այլև ծանոթանա բանվորագյուղացիական լայն մասսաների տրամադրությունների ու սլահանջների հետ և կարողանա ժամանակին դրանց բավարարություն տալ:

### Ո՞վ է ԳՅՈՒՂԹՂԹԱԿԻԾԸ

«Մաճկալ»-ը գյուղերից նամակներ է ըստանում, վորով շատ գյուղացիներ հայտնում են թե ինչպես անեն, վոր իրենք ել թղթակից դառնան. շատերն ել գիմումներ են ուղարկում իրենց կենսագրությունների հետ և խնդրում են իրենց հաշվի առնել և ընդունել

վորպես թղթակից: Եստերն ել կարծում են,  
վոր գյուղթղթակից լինելու համար խմբագ-  
րությունը պետք է նշանակի և իմաց տա:  
Վորոչ տեղերումն ել գյուղըջիջները, գյուղ-  
խորհուրդները և հասարակական մյուս կաղ-  
մակերպությունները ընտրում կամ նշանա-  
կում են այս կամ այն ընկերոջը վորպես  
թղթակից և պարտադրում նրան թերթերում  
գրելու: Ի հարկե այդ բոլորը սխալ է: Ամեն  
մեկը, յեթե ցանկանում է գյուղթղթակից  
դառնալ, կարող է գրել պատի կամ տպագիր  
թերթերում և նա կհամարվի գյուղթղթակից:  
Նա չպետք է սահմանափակվի միայն նրանով,  
վոր ինքը թերթերի միջոցով ակտիվ մասնակ-  
ցություն է ունենում մեր սոցիալիստական շի-  
նարարության դործում, նա պետք է աշխա-  
տի իր գյուղում և ընդհանրապես իր շրջապա-  
տում գանվող աշխատավոր գյուղացիներին և  
գեղջիուհիներին գրավել գյուղթղթակիցների  
չարքերը, ընդհանրացնել մամուլի գաղափար-  
ները և նրանց ևս մասնակից դարձնի սոցիա-  
լիստական շինարարության դործին: Յեթե  
գյուղթղթակիցը այդպես չի աշխատում, ա-  
պա նա վատ թղթակից է, վորովհետեվ նա չի  
կատարում իր հասարակական պարտականու-  
թյունը:

Գյուղթղթակիցը դործնական մասնակցու-  
թյուն պետք է ունենա նաև գյուղի հասարա-  
կական կյանքում և առաջին հերթին պետք է  
կաղմակերպի մեր մամուլի տարածման դոր-

ծը: Գյուղթղթակիցը յեթե գրում է թերթե-  
րում, ապա նա պետք է աշխատի, վոր իր գը-  
րածները նպատակին հասնեն և մասնավորա-  
պես ընթերցվեն մասսայի կողմից: Տարածել  
մամուլը, մաստաներին կապել դրա հետ, մա-  
մուլի շուրջը հավաքել ընթերցող նոր մասսա-  
ներ, մամուլի առաջադրած խնդիրները կյան-  
քի մեջ անցկացնել՝ ահա գյուղթղթակցի գըր-  
խավոր պարտականությունը:

### ԻՆՉՊԵՍ ՍՈՎՈՐԵԼ ԹԵՐԹՈՒՄ ԳՐԵԼ

Յեթե գյուղթղթակիցը չսովորի, չի կա-  
րող աստիճանաբար իր վորակը բարձրացնել.  
գյուղթղթակիցը պետք է կարողանա հետզհետե  
իր թղթակցությունների վորակը բովանդակու-  
թյունը բարձրացնել: Իրա համար հարկավոր  
է նաև հատուկ ուշադրություն դարձնել թըղ-  
թակցության լեզվին, վոճին, կառուցվածքին:  
Սակայն կարեվորը բովանդակությունն է:  
Պետք է ծանոթանալ մասսաների տրամադ-  
րությունների հետ, պետք է ծանոթանալ գոր-  
ծի հետ:

Իրա համար անհրաժեշտ է ակտիվ մաս-  
նակցություն ունենալ գյուղի հասարակական  
կյանքում, գյուղխորհրդում, կոոպերատի-  
վում, փոկում և հասարակական մյուս կազ-  
մակերպություններում: Ակտիվ աշխատանք  
կատարելով, գյուղթղթակիցը կկարողանա  
մամուլում բարձրացնել ավելի կարեվոր և հե-

տաքրքիր Հարցեր և միաժամանակ ինքը կհա-  
ռաջադիմի և վորակապես կանի:

Յերրորդ՝ անհրաժեշտ և սովորել քաղ-  
դրադիտական, ընթացիկ մոմենտի և այլ խըմ-  
բակներում, մասնակցել կոմբլիջների դռնբաց  
նիստերին և գյուղի պատի թերթի խմբկոլի  
կողմից կազմակերպված ժողովներին ու պա-  
րապմունքներին: Մի խոսքով գյուղթղթակի-  
ցը պետք և զբաղվի իրեն քաղաքական լուսա-  
վորության գործով:

Յերրորդ՝ ամուր կերպով պետք և կսու-  
վել պատի թերթի հետ, թղթակցել նրան, աշ-  
խատել խմբկոլին կից դանազան հանձնաժո-  
ղովներում և այլն: Այսպիսով թղթակիցները  
գործնական դպրոց են անցնում:

Չորրորդը՝ գյուղթղթակիցը միշտ պետք  
և կապված լինի թերթերի, քաղաքական ու  
քանդակարվեստի թղթակցական դրականության հետ  
և կարողանա որեցոր առաջադիմի:

Բացի վերոհիշյալ չորս պայմանները,  
չատ կարեւոր և նաև այն, վեր յուրաքանչյուր  
գյուղթղթակից յեթե մի վորևե թղթակցու-  
թյան և ուղարկում կենտրոնական տպագիր  
թերթերին, ապա նա պետք և միշտ հետեւի և  
խմանա թե թերթերում տպագրված իրեն թրղ-  
թակցության մեջ ինչպիսի՞ փոփոխություն-  
ներ ևն մտցված, վո՞ր մասն և կրճատված կամ  
ուղղված, ապա այդ բոլորը պետք և լուրջ  
քննության առնի, համեմատի թղթակցության  
քննարկի հետ (վորի պատճեն իրեն մոտ և մը-

նում) և հետագայում աշխատի այդ սխալնե-  
րը վերացնել: Սա չափազանց ոգտավետ և  
գործնական միջոց է, լավ գրել սովորելու  
համար:

Մեզ մոտ գյուղթղթակիցներից մեծ մասը  
դեռ կիսապրագետ են, վորի պատճառով չեն  
կարողանում լավ թղթակցություններ գրել,  
դրա համար ամեն մի գյուղթղթակից պետք  
է աշխատի իր կիսապրագիտությունն էլ վե-  
րացնել և ձեռք բերել բազմակողմանի պատ-  
րաստականություն:

Ցանկալի յե, վոր ամեն գյուղացի կամ  
դեղջկուհի սկզբից գրի գյուղի պատի թերթին  
և յերբ մի քիչ կսովորի, այնուհետև կգրի  
նուև կենտրոնական տպագիր թերթերում:

### ԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑԸ ՍՈՑՄՐՑՄԱՆ ԿԱԶՄԱ- ԿԵՐՊԻՉԸ ՊԵՏՔ Ե ՀԱՆԴԻՍԱՆԱ

Մենք արդեն ասացինք, վոր գյուղթղթա-  
կիցը հասարակական գործիչ է, վոր նա վոչ  
միայն մամուլում գրելով, այլև իր առորյա  
գործնական աշխատանքներով պետք է ունի  
մեր կուսակցությանը և իշխանությանը, գյու-  
ղի սոցիալիստական վերակառուցման դժվա-  
րին աշխատանքները հաջողությամբ և ավե-  
լի արագ թափով սուաջ տանելու համար:  
Գյուղում ամեն աշխատանք (կոլխոզ-չինարա-  
րություն, կոոպերացիա, խորհրդների վեր-  
ընտրություն, աշնանացան, հողաշինարարու-  
թյուն և այլն), վոր ձեռնարկում է մեր իչ-

խանութիւնը, գյուղթղթակիցը պետք է լինի այդ աշխատանքների կատարման առաջավոր դիրքերում, նա պետք է աշխատի, վոր խորհրդային իշխանության և նրա որդանների բոլոր դիրեկտիվները և թափած ջանքերը աննպատակ չանցնեն և գրական արդյունք տան:

Այժմ ինչպես քաղաքի արդյունաբերութեան մեջ, նույնպես և գյուղի կոլխոզներում, սոցաւողական և գյուղատնտեսական կոոպերացիայում, խորհրդներում, կուլտուրական հիմնարկներում և հասարակական բոլոր կադմակերպութիւններում և մեր կյանքի բոլոր բնագավառներում անցկացվում է սոցիալիստական մրցութիւն:

Թե ինչ նշանակութիւն ունի սոցիալիստական մրցութիւնը, մեր թղթակիցներից շատերն արդեն թերթում կարդացել են և գիտեն: Այստեղ անհրաժեշտ է բերել մի փաստ միայն, վոր Ղուրդուղուլու և Ղամարլույի շրջանների կոլխոզները սոցմրցման ճանապարհով 6 ամսվա ընթացքում հսկայական նվաճումներ ունեցան, կոլլեկտիվացման յենթարկված գյուղացիական տնտեսութիւնները 7 տոկոսից բարձրացրին 25-ի և յլն:

Գիտակցելով սոցմրցման այդ հսկա նշանակութիւնը, գյուղթղթակիցն այս ասպարեզում ևս պետք է լինի առաջավոր շարքերում:

Սոցմրցման Ֆրոնտում գյուղթղթակիցը չպիտի բավարարվի միայն սոցմրցման մասին

Թերթերում գրելով, կամ նրա արդյունքները լուսաբանելով, այլ նա պետք է անմիջական կազմակերպիչը հանդիսանա, նա կոլլեկտում և մյուս կազմակերպություններում ու հիմարկներում, տեղն ու տեղը պետք է կազմակերպի սոցմրցումը և հետեվի, վոր սոցմրցման պայմանագրերը կյանքի մեջ կիրառվեն:

## ՍՈՑՄՐՑՈՒՄԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐ ԲԱՐՁՐ ԲԵՐՔԻ ՀԱՄԱՐ

Մեր իշխանությունը հսկայական աշխատանքներ և կատարում բերքատվությունը բարձրացնելու համար. գյուղում կուսակցական, խորհրդային և բոլոր կազմակերպությունները հարվածային աշխատանք են կատարում այդ ուղղությամբ: Գյուղթղթակիցն ևլ, վորպես սոցիալիստական շինարարության առաջամարտիկ, մեծ անելիքներ ունի այս սասպարեզում: Գյուղթղթակիցը պատի Թերթի միջոցով սոցմրցման պետք է դուրս բերի գյուղերը, կոլլեկտները և անհատական տնտեսություններն իրար հետ: Լավ բերք ստանալու համար գյուղթղթակիցը սոցմրցում պետք է կազմակերպի՝ սերմազտման, սերմի ախասահանման, հողերի պարարտացման, ագրիկուլտուր ձևերի և միջոցների կիրառման և ընդհանրապես այն հարցերի շուրջը, վորոնք կնրպաստեն բերքի բարձացմանը:

## ՍՈՑՄԲՈՒՄԸ ԿՈԼԵՈՉՆԵՐՈՒՄ

Մեր բոլոր կոլխոզներում ել կան դյուզ-  
թղթակիցներ: Նրանք խոշոր անելիքներ ունեն  
կոլխոզներում սոցմրցում կազմակերպելու առ-  
պարհում:

Պատի թերթերի միջոցով նրանք պետք է  
ստաջադրեն, վոր կոլխոզներն ավելի բարձ-  
րացնեն իրենց ապրանքաչուֆյունը, վոր նը-  
րանք ավելի շատ բամբակ, հաց կամ դյուզա-  
տնտեսական այլ նյութեր տան մեր իշխանու-  
թյանը: Իրա համար կոլխոզները իրենց հոգե-  
րի մշակությունը մեքենայացման պետք է  
յենթարկեն:

Կոլխոզներում սոցմրցում կազմակերպե-  
լիս, թղթակիցներն ուչադրություն պետք է  
դարձնեն դլխավորապես հետեվյալ հարցերի  
վրա.— 1. կոլխոզների արտադրական պլանի  
բարձրացում, 2. ցանքների տարածության  
լայնացում, 3. աշխատանքի արտադրողակա-  
նության բարձրացում, 4. չքավոր ու միջակ  
տնտեսությունների ավելի մեծ շախերի կոլ-  
լեկտիվացում, 5. մթերքների ինքնարժեքի ի-  
ջեցում, 6. կոլխոզների ուժերով նոր կոլխոզ-  
ների կազմակերպում, 7. անդրադիտության  
վերացում կոլխոզի անդամների միջից և այլն:

Այս խնդիրներն իրականացնելու համար,  
դյուզթղթակիցը պետք է լինի ակտիվ և դոր-  
ծունյա:

ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ  
ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Այս բոլորից բացի թշխակիցները և պատի թերթերը պետք է աչալուրջ հետեւեն և հսկեն, վոր սոցմբրցման պայմանագրերն իսկապես իրագործվեն, վոր սոցմբրցումն անպայման դրական արդյունք տա, իսկ դրա համար հաճախ, անգամ պարբերաբար պետք է ստուգել, թե ինչ է արվում սոցմբրցման պայմանագիրն իրագործելու համար:

Միայն այսպիսով հնարավոր է սոցմբրցումը կանոնավոր տանել և դրական արդյունք ստանալ:

Նույն ձեւով էլ սոցմբրցումը պետք է կազմակերպել կոոպերացիայում և հասարակական բոլոր հիմնարկներում և կազմակերպութիւններում:

ԻՆՔՆԱՔՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ  
ԳՅՈՒՂԹՂԹԱԿՑԻ ԱՆԵԼԻՔԸ

Ինքնաքննադատութիւնը լավագույն վեներն է, սոցիալիստական շինարարութեան մեջ նկատվող բացերի դեմ պայքարելու համար:

Ինքնաքննադատութիւնը գործնականում կյանքի մեջ կիրառելու համար, գյուղթղթուկիցն ունի աշխատանքի մի շարք ձեւեր:

ՄԱՄՈՒԼԸ ՀԶՈՐ ԶԵՆՔ Ե

Ամենից առաջ, գյուղթղթակիցը, ինչպես նաև ամեն մի չքավոր ու միջակ ակտիվ գյու-

դացի, մամուլի միջոցով պետք է աշխատի  
հանդես բերել այն բոլոր բացերը, վորոնք նը-  
կատվում են գյուղական հիմնարկների և կազ-  
մակերպութիւնների աշխատանքների մեջ, նա  
պետք է ժամանակին արձադանքի մամուլին,  
թե ինչպես են իրադործվում կուսակցութեան  
դիրեկտիվները գյուղում կատարվող աշխա-  
տանքներում և ամեն կերպ պետք է հարվածի  
կուսակցութեան դիրեկտիվների աղավաղման  
և դասակարգային գծի խեղաթյուրման կոնկ-  
րետ արտահայտութիւններին:

Մեր պարբերական մամուլի եջերից հա-  
զարավոր որինականեր կարելի չէ բերել, թե  
ինչպես թղթակիցների նամակների հիման վը-  
րա, կամ նրանց քննադատութեան շնորհիվ,  
դասակարգային գծի աղավաղման բաղմաթիվ  
դեպքեր են հայտնաբերված և համապատաս-  
խան մարմինները հետեվելով մամուլում տը-  
պադրված թղթակցութիւններին, ժամանա-  
կին ուղղել և շտկել են այդ սխալները, կամ  
բաղմաթիվ մնասարար մարդիկ, վորոնք խըց-  
կված են յեղել խորհրդային որդաններում,  
թղթակիցների նամակների հիման վըրա դուրս  
են շարտվել մեր հիմնարկներից, դատի տրվել  
և այլն:

Ահա թե ինչպիսի խոշոր նշանակութեան  
ունի և ինչպիսի հզոր գեղք է մեր մամուլը,  
վորի միջոցով էլ ամէլի պետք է խորացնել և  
ծավալել ինքնաքննադատութեան յոգունդը:

ՄԵԶ ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ԱՌՈՂԶ  
ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Յեթե դյուղթղթակիցն առողջ ինքնաքննա-  
դատություն հանդես չի բերում, այդ դեպքում  
նա վոչ միայն չի ոգնում բացերի վերացմանը  
և մեր աշխատանքների աշխուժացմանը, այլ  
ընդհակառակը, վնասում է մեր սոցիալիստա-  
կան շինարարությանը:

Շատ դեպքեր են պատահել, վոր թղթա-  
կիցները գրել են իրենց անհատական հաշիվ-  
ներից յելնելով, ուրիշների վարկարեկելու նը-  
պատակով, կամ թե չե մի փոքրիկ փաստն  
աշխատում են մեծացնել, ուռեցնել: Շատ  
թղթակիցներ սխալ են հասկացել ինքնաքննա-  
դատությունը: Որինակ՝ Նոր-Բայազետում  
դյուղթղթակիցների խորհրդակցության ժա-  
մանակ մի քանի դյուղթղթակիցներ պնդում  
էին, վոր ընկ. Ստալինն ասել է, վոր թղթ-  
թակցության 5 տոկոսն էլ ճիշտ լինի, դա  
դրական պետք է համարել, հետեվապես կա-  
րելի յե 5 տոկոսը ճիշտ դրել, իսկ մնացածը  
վոչ:

Սա առողջ ինքնաքննադատություն չէ և  
ամեն կերպ պետք է խուսափել նման սխալ  
հասկացողությունից, պետք է գրել այնպիսի  
թղթակցություն, վորն ամբողջովին իրակա-  
նություն լինի և դա կլինի իսկապես առողջ  
քննադատություն:

Ինքնաքննադատությունը ծավալելու և աշխատավորական լայն մասսաներին մեր սոցիալիստական շինարարության հսկա աշխատանքներին գրավելու համար, բանգյուղթղթակիցների համամիութենական IV խորհրդակցությունը գյուղական պատի թերթերի առաջ, մի շարք նոր խնդիրներ գրեց և աշխատանքի նոր ձևվեր մշակեց:

Պատի թերթին կից կազմակերպված նրվաճումների բյուրոն լավապույն միջոցն է ինքնաքննադատությունը ծավալելու համար: Այդ բյուրոն ժամանակին հաշվի պիտի առնի այն բոլոր թղթակցությունները, վորոնք տրպագրվում են թե տպագիր և թե պատի թերթերում, պետք և կապվի Բանգյուղտեսչության տեղական սեկցիայի հետ և նրա հետ միասին պետք և աշխատի, վոր գրանք անհետևանք չմնան և տեղական որդանների կողմից համապատասխան ընթացք տրվեն:

Պատի թերթերը պետք և աշխատեն մասսայական հսկողություն ստեղծել մեր գյուղական բոլոր կազմակերպությունների աշխատանքների վրա, գրու համար պատի թերթն իրեն շուրջ համախմբելով գյուղի ակտիվին, հաճախակի մասսայական ստուգումներ և ըստուգատեսներ պետք և կազմակերպի գյուղխորհրդի, կոլխոզի, կոոպերատիվի և այլ

կաղմակերպությունների աշխատանքների վըրա, պարզի նրանց բացերը և պատի թերթի միջոցով առաջարկություններ անի, այդ բացերը վերացնելու:

## ԶԳՈՒՅՇ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԹՇՆԱՄՈՒՑ

Մեր դասակարգային թշնամին միշտ էլ աշխատում է հարմարվել մեր պայմաններին, պայքարի հարմար միջոցներ ստեղծել և կըովել մեր դեմ:

Ինքնաքննադատության դիմակի տակ կուլակները և տոհասարակ հակահեղափոխական տարրերն աշխատում են խփել մեր թույլ ողակներին, աշխատում են վարկարեկել մեր լավագույն աշխատողներին:

Գյուղում մեր սուրբյա գործնական աշխատանքների ընթացքում, կուլակին այդ այնքան էլ հեշտ չի հաջողվում, վորովհետև նրան մեր տեղական կաղմակերպությունները լավ են ճանաչում և նման դեպքերում տալիս են իրեն արժանի հակահարվածը:

Այսպիսի հարվածների հանդիպելով, կուլակները սկսում են իրենց պայքարը տանել ավելի քողարկված ճանապարհներով, դառնում են «թղթակից» և «թղթակցի» անվան տակ շարունակում իրենց հակահեղափոխական աշխատանքը, ընդդեմ խորհրդային իշխանության:


Այսպիսի սրինակներ մենք ունենք: Որինակ՝ Նոր-Ֆայազեղի գավառի Թաղաքենոյ գյուղից կուլակ «Թղթակից» Մելիքսեթյանը թերթի միջոցով շատ խիտա վարկարեկել էր գյուղի կազմակերպութեաններին և դիտարկութեամբ բարակ աշխատողներին: Այդ «Թղթակից» Մելիքսեթյանը մի շքամոր գյուղացու գառի ապով, անդամ բանտ էր նստեցրել յերկու ամսով, վոր էրր թե իրեն, վորպես «Թղթակից» հալածել և: «Թղթակից» Մելիքսեթյանը վճարում էր 800 ւ. միասհարկ, իսկ իրեն տանը գրած ինչ վոր «սուրբ գրքով» թայանում էր գյուղացիներին, տարեկան յերկուց-չորս հազար սուրբի յեկամուս ստանալով:

Այսպիսի սրինակներ շատ կան: Լինում են նաև դեպքեր, վոր կուլակներն իրենց ազգացութեան տակ են տանում այս կամ այն Թղթակիցին և նրա միջոցով նորից մամուլում հանդես են բերում իրենց արամադրութեանները:


Նույն «Թղթակից» կուլակ Մելիքսեթյանը պատի թերթի ամբողջ խմբուլին իրեն ազգացութեան տակ էր առել և անդամ թերթի խմբարարութեանը կատարվում էր նրանց տանը և պատի թերթը փաստորեն խմբարարվում էր կուլակ «Թղթակից» Մելիքսեթյանի կողմից:

Այստեղ գյուղթղթակիցը չափազանց աշարարջ պիտի լինի, նա պետք և սրագործի, վոր գյուղթղթակցական շարքերում նման հա-

Կահեղափոխական և մեզ թշնամի տարրեր չը-  
 խցկվեն, նա պետք է ուշի-ուշով հետևի, վոր  
 կուլակաները տեղ չունենան մեր մամուլի եջե-  
 րում, նա պետք է ականջներից բռնած մեյ-  
 դան քաշի նման կեղծ թղթակիցներին և հանձ-  
 նի խորհրդային դատական որդաններին, հա-  
 մապատասխան պատիժ տալու համար:



ՀԵՍՏ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ  
 ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
 ԳՐԱԳՐԱՐԱՆ ՁԵ 2  
 114275ՄԻՑ



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039139

[074]

4072 5 40964

A  $\frac{I}{4241}$